ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՇԻՄՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության մերձավորարևելյան քաղաքականության տեսանկյունից՝ կարևորվում է Հորդանանի Հաշիմյան Թագավորութան հետ քաղաքական և տնտեսական կապերի ամրապնդումը: Հորդանանում գոյություն ունի ոչ մեծաթիվ, սակայն ակտիվ հայ համայնք: Թեև Հորդանանի հետ հարաբերությունները զարգանում են համեմատաբար դանդաղ ընթացքով, այսօր առկա է նշանակալի ներուժ հայ-հորդանանյան համագործակցությանը նոր լիցք հաղորդելու համար:

2014թ. տեղի է ունեցել ՀՀ նախագահի այցը Ամման, որի շրջանակներում երկու երկրների միջև ստորագրվել են տարբեր ոլորտներում համագործակցության վերաբերյալ թվով 11 համաձայնագիր: Կողմերի միջև ակտիվորոն գործում է ուսանողների փոխանակման ծրագիրը:

Համաձայնագրի նպատակն է խթանել միջազգային ավիացիոն համակարգը, դյուրացնել միջազգային օդային տրանսպորտի ընդլայնման հնարավորությունները, ինչպես նաև միջազգային օդային տրանսպորտում ապահովել թռիչքային և ավիացիոն անվտանգության բարձրագույն մակարդակ:

Համաձայնագրի վավերացման արդյունքում Կողմերի միջև կարող է ակնկալվել հարաբերությունների զարգացում երկու հիմնական ուղղություններով՝ զբոսաշրջություն և առևտուր: Հորդանանի և Հայաստանի միջև օդային ուղիղ հաղորդակցման բացակայությունը բացասաբար է անդրադառնում զբոսաշրջիկների երկկողմ այցելութունների մակարդակի վրա: Օդափոխադրման ոլորտում սերտ համագործակցությունը հնարավորություն կտա ավելի ինտենսիվ զբոսաշրջության ակտիվության համար: Առևտրատնտեսական հարաբերությունների տեսանկյունից պայմանագրի հաստատումը կամ վավերացումը հնարավորություն կտա երկու երկրների բիզնես շրջանակների ավելի հաճախակի և սերտ շփումների համար:

Ելնելով վերոհիշյալից՝ 2018թ. նոյեմբերի 1-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության Կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի վավերացումը կամ հաստատումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

ՀՀ արտաքին գործերի

3/14/2019

X

ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN GRIGOR 3601710307

նախարարի տեղակալ
Գրիգոր Հովհաննիսյան

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՇԻՄՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության Կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը ստորագրվել է 2018թ. նոյեմբերի 1-ին, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ Տաթևիկ Ռևազյանի կողմից:

Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի հայտագրերից վերջինի ստացման օրվանից, որով Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցում են Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ իրենց համապատասխան ներպետական իրավական ընթացակարգերի կատարման մասին:

2018թ. դեկտեմբերի 17-ին հորդանանյան կողմից ստացվել է ծանուցում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

ՀՀ արտաքին գործերի

3/14/2019

X

ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN GRIGOR 3601710307

նախարարի տեղակալ
Գրիգոր Հովհաննիսյան